Կարգապահական գործ թիվ ԿԳ-15082

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2015 թվականի նոյեմբերի 11-ի թիվ 274-րդ ԿԳ նիստի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ ԿԳ/161-Ա

ՓԱՍՏԱԲԱՆ ԱՐՄԵՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի **(այսուհետ նաև՝ Պալատ)** խորհուրդը **(այսուհետ նաև՝ Խորհուրդ)**, նիստը նախագահող՝ Երվանդ Վարոսյանի, Խորհրդի անդամներ՝ Սիմոն Բաբայանի, Տիգրան Խուրշուդյանի, Նելլի Հարությունյանի, Կարեն Մեժլումյանի, Լիպարիտ Սիմոնյանի, Ալեքսանդր Սիրունյանի, Մարտուն Փանոսյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի,

քննության առնելով փաստաբան Արմեն Հայրապետյանին (արտոնագիր թիվ 1787) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.</u>**

18.06.2015թ. Պալատ է ստացվել Երևանի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների քննչական բաժնի պետ՝ Ս.Գրիգորյանի՝ փաստաբան Ա. Հայրապետյանի վարքագիծը քննարկելու մասին գրությունը, որով հայտնվել է, որ նրա միջնորդության հիման վրա 09.06.2015թ. քննչական բաժնում պետք է իրականացվեր քրեական գործով մեղադրյալների առերես հարցաքննություն, որի մասին պատշաճ տեղեկացվաց լինելով, պաշտպանը 08.06.2015թ. միջնորդել է առերեսումը ՀՀ ԱՆ <<Նուբարաշեն>> ՔԿՀ-ում անցկացնելու մասին: Նույն օրը միջնորդությունը քննիչի կողմից մերժվել է, որի մասին պաշտպանը պատշաճ տեղեկացվել է: Մեղադրյալի՝ քննչական բաժին տեղափոխված լինելու պայմաններում, փաստաբան՝ Ա. Հայրապետյանը առանց որևէ հարգելի պատճառաբանության չի ներկայացել քննչական գործողությանը և նույն օրը քննչական բաժնի գրասենյակ է մուտքագրել քննիչի կողմից իր ներկայացրած միջնորդությունը մերժելու մասին որոշման դեմ բերված բողոքի օրինակը:

2. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>**

16.07.2015թ. ՀՀ Փաստաբանների պալատի նախագահի թիվ 205-Ա/ԿԳ-15082 որոշմամբ փաստաբան Արմեն Հայրապետյանի (արտոնագիր թիվ 1787) նկատմամբ՝ Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 6.1.1 կետի խախտման հատկանիշներով հարուցվել է կարգապահական վարույթ (թիվ ԿԳ-15082): Կարգապահական գործը հանձնվել է կարգապահական գործ նախապատրաստող փաստաբան Համլետ Ստեփանյանին:

3. <u>Դիմողի և Պատասխանողի համառոտ բացատրությունները</u>

Ըստ դիմողի 12.06.2015թ. գրության՝ թիվ 10109015 քրեական գործով մեղադրյալ Մ.Գրիգորյանի շահերի պաշտպան Ա.Հայրապետյանի միջնորդությամբ քննչական բաժնում 09.06.2015թ. նշանակվել է առերես հարցաքննության, որի մասին պաշտպանը պատշաճ տեղեկացվել է: 08.06.2015թ. պաշտպանը միջնորդել է քննչական գործողությունը անցկացնել <<Նուբարաշեն>> ՔԿՀ-ում: Նույն օրը միջնորդությունը քննիչի կողմից մերժվել է, և պաշտպանին գրավոր ծանուցվել է ինչպես միջնորդությունը մերժելու, այնպես էլ 09.06.2015թ. ժամը 15:00-ին կայանալիք առերես հարցաքննության մասին: Նույն օրը մեղադրյալը <<Նուբարաշեն>> ՔԿՀ-ից տեղափոխվել է քննչական բաժին, սակայն պաշտպանը առանց հարգելի պատճառի չի ներկայացել քննչական գործողությանը և նույն օրը քննչական բաժնի գրասենյակ է մուտքագրել բողոք՝ քննիչի կողմից իր միջնորդությունը մերժելու մասին որոշման դեմ: Արդյունքում՝ մեղադրյալի տեղափոխման համար ծախսվել են պետական միջոցներ, իսկ պաշտպանը չներկայանալով առերեսմանը, դիտավորյալ խոչընդոտել է դրա իրականացմանը:

3.1. <u>Դիմողի համառոտ բացատրությունը.</u>

Կարգապահական գործի նախապատրաստման, ինչպես նաև Պալատի խորհրդում կարգապահական գործի քննության ընթացքում Դիմողը որևէ մասնակցություն չի ունեցել:

3.2. <u>Պատասխանողի համառոտ բացատրությունը.</u>

Պատասխանող Արմեն Հայրապետյանի բացատրության համաձայն՝ ինքը պայմանագրային կարգով ստանձնել թիվ 10109015 քրեական գործով մեղադրյալ Մ.Գրիգորյանի շահերի պաշտպանությունը: Նախաքննության ընթացքում ավագ քննիչ Վ.Մամիկոնյանը բազմիցս կամայականորեն խախտումներ է թույլ տվել և ստեղծել անհավասար պայմաններ կողմերի միջև՝ ի վնաս իր պաշտպանյալի իրավունքների և օրինական շահերի: Մասնավորապես, մինչև կալանքի վերահաստատման մասին միջնորդություն դատարան ներկայացնելը, չնայած իր միջնորդությանը, քննիչը եռօրյա ժամկետում առերես չի հարցաքննություն չի իրականացրել իր պաշտպանյալի և վերջինիս դեմ ցուցմունք տված անձանց միջև, հատկապես գործով նույն հոդվածով մեղադրվող Ա.Սարգսյանի հետ, որը կասկածելիորեն գտնվում է ազատության մեջ և տվել է իրար հակասող, իրարամերժ ցուցմունքներ:

Առերես հարցաքննության կատարումը ձգձգվել է 1 ամիս 20 օր, ինչը խիստ

կասկածի տակ է դրել քննիչի կողմնակալությունը քրեական գործով օբյեկտիվ ճշմարտությունը բացահայտելու ուղղությամբ: Նպատակը՝ Ա.Սարգսյանի փոփոխված, հակասական ցուցմունքները իրեն ձեռնտու հանգամանքների՝ դեպքի կատարման ժամանակի, վայրի և այլնի հետ հարմարեցնելն է: Արդարադատության շահերից ելնելով, հաշվի առնելով, որ մյուս քննչական գործողությունները կատարվել են քրեակատարողական հիմնարկում, կողմերի միջև անհավասար վիճակից խուսափելու համար, նախապես միջնորդել է, որ իր պաշտպանյալի և Ա. Սարգսյանի միջև առերես հարցաքննությունը անցկացվի ՔԿՀ-ում, այլ ոչ թե քննիչի առանձնասենյակում: Քննիչի կողմից միջնորդությունը մերժելու մասին որոշումն ստանալով, նշանակված առերեսումից ժամեր առաջ այդ որոշման դեմ բողոք է ներկայացրել դատախազին՝ բողոքի մեկ օրինակը հանձնելով նաև քննչական բաժին: Բողոքում ինքը ներկայացրել է այն բոլոր հանգամանքները, որոնք իր մոտ հիմնավոր ենթադրություն են առաջացրել, որ ոստիկանության շենքում տեղակայված քննչական բաժնում նախատեսված առերես հարցաքննությունը կարող է անհավասար վիճակ ստեղծել իր պաշտպանյալի և առերես հարցաքննվող մյուս մեղադրյալի միջև:

Պատասխանողը հայտնել է նաև, որ նշանակված առերեսումից մեկ օր անց՝ 11.06.2015թ. այդ քննչական գործողությունն իրականացվել է քրեակատարողական հիմնարկում, ինքը մասնակցել է դրան: Իսկ 15.06.2015թ. Երևան քաղաքի Աջափնյակ և Դավիթաշեն վարչական շրջանների դատախազության ավագ դատախազ Խ.Երեմյանն իրեն ուղղված գրությամբ հայտնել է, որ նկատի ունենալով այն հանգամանքը, որ առերես հարցաքննությունն արդեն իսկ 11.06.2015թ. իրականացվել է քրեակատարողական հիմնարկում, ուստի ներկայացված բողոքը քննության չի առնվելու:

Պատասխանողը նշել է նաև, որ մեղադրյալին կալանավայրից քննիչի աշխատասենյակ տեղափոխելը առավել ծախսատար է, քան քննիչի՝ առերեսվողի հետ ՔԿՀ մեկնելը:

Խորհրդի նիստին պատասխանողը չի ներկայացել, խնդրել է հիմք ընդունել իր բացատրությունը և նիստն անցկացնել իր բացակայությամբ:

4. <u>Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, եզրակացության վերաբերյալ առարկությունները և գործի հանձնումը Խորհրդին.</u>

Կարգապահական գործի նախապատրաստման արդյունքում, նախապատրաստող Հ.Ստեփանյանը ներկայացրել է եզրակացություն, համաձայն որի.

<<Ղեկավարվելով Վարույթի կարգի 22-րդ կետի պահանջներով, ապացույցների հետազոտման և գնահատման արդյունքում, սույն եզրակացության 5-րդ մասի 1-5 կետերում շարադրված՝ գործի լուծման համար նշանակություն ունեցող էական փաստերի առկայության պայմաններում, հաշվի առնելով իրավակարգավորումներն առ այն, որ՝

1. ՀՀ քր. դատ. օրի 19 հոդ. 2-րդ մասի համաձայն՝ <<Քրեական վարույթն իրականացնող մարմինը պարտավոր է … ապահովել օրենքով չարգելված բոլորն

միջոցներով մեղադրանքից նրանց պաշտպանվելու փաստացի հնարավորությունը>>,

2. ՀՀ քր. դատ. օրի 23 հոդ. 1-ին և 5-6րդ կետերի համաձայն՝ <<Քրեական դատավարությունն իրականացվում է մրցակցության սկզբմունքի հիման վրա>>, <<Քրեական դատավարությանը մասնակցող կողմերը քրեական դատավարական օրենսդրությամբ օժտված են իրենց դիրքորոշումը պաշտպանելու հավասար հնարավորություններով...>>, <<Քրեական դատավարությանը մասնակցող կողմերն իրենց դիրքորոշումը, այն պաշտպանելու եղանակները և միջոցներն օրենքի շրջանակներում ընտրում են ինքնուրույն՝ անկախ դատարանից, այլ մարմիններից և անձանցից>>,

3. ՀՀ քր. դատ. օրի 73 հոդ. 5-րդ կետի համաձայն՝ <<Պաշտպանը պարտավոր է՝ .. մեղադրյալին իրավաբանական օգնություն ցույց տալու համար ներկայանալ քրեական վարույթն իրականացնող մարմնի կանչով>>

4. ՀՀ քր. դատ. օրի 205 հոդ. 5-րդ և 212 հոդ. 3-րդ կետերի համաձայն՝ <<Արգելամքի տակ գտնվող կասկածյալը կամ մեղադրյալը կանչվում են արգելանքի տակ պահելու վայրի վարչակազմի միջոցով>>, <<Մեղադրյալը հարցաքննվում է նախաքննության կատարման վայրում, իսկ անհրաժեշտության դեպքում՝ իր գտնվելու վայրում>>

5. <<Փաստաբանության մասին>> ՀՀ օրենքի 5-րդ հոդ. 1-ին մասի համաձայն՝ փաստաբանական գործունեությունն իրականացվում է <<օրենքով չարգելված բոլոր միջոցներով և եղանակներով>>, իսկ 21 հոդ. 1-ին մասը ազդարարում է փաաստաբանի անկախությունը փաստաբանական գործունեություն իրականացնելիս: Նույն օրենքի 18 հոդ. 2-րդ մասի համաձայն՝ <<Փաստաբանը փաստաբանական գործունեություն իրականացնելիս ազատ է կատարելու այն , ինչ արգելված չէ օրենքով ...>>

գտնում եմ

Արմեն Հայրապետյանը չի կատարել վարույթի հարուցման որոշման մեջ նշված Վարքագծի կանոնագրքի 6.1.1 ենթակետով նախատեսված արարաքը. դիտավորյալ, առանց հարգելի պատճառների չի խուսափել նախաքննական մարմնի կանչով քննչական գործողության /առեռեսման/ ներկայանալու պարտականությունից>>:

Կարգապահական գործը խորհրդին է հանձնվել 22.09.2015թ.:

Սույն կարգապահական գործով Պալատի խորհուրդը գումարել է նիստ՝ 11.11.2015թ.:

5. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների շարադրմամբ.</u>

Պալատի խորհուրդը հաստատված է համարում հետևյալ փաստերը.

1. Պատասխանողը հանդիսացել է թիվ 10109015 քրեական գործով մեղադրյալ Մ.Գրիգորյանի պաշտպանը:

2. Մինչև իր պաշտպանյալի նկատմամբ կիրառված՝ խափանման միջոց՝ կալանքի վերահաստատման միջնորդությունը դատարան ներկայացնելը,

միջնորդել է իր պաշտպանյալին առերես հարցաքնել գործով մյուս մեղադրյալի հետ:

3. Միջնորդությունը բավարարվել է 1 ամիս 20 օր անց:

4. Մ.Գրիգորյանի հետ անհրաժեշտ քննչական գործողությունները մշտապես կատարվել են քրեակատարողական հիմնարկում: Սակայն մեղադրյալների միջև առերեսումը քննիչը որոշել է անցկացնել իր աշխատասենյակում:

5. Այդ մասին պատասխանողը տեղեկացել է 05.06.2015թ. հեռախոսազանգի միջոցով:

6. 08.06.2015թ. ժամը 09.40-ին, պատասխանողը գրավոր միջնորդություն է ներկայացրել առերես հարցաքննությունը քրեակատարողական հիմնարկում անց կացնելու մասին:

7. Նույն օրը միջնորդությունը մերժվել է և պատասխանողը գրավոր ծանուցվել է 09.06.2015թ. ժամը 15:00-ին քննչական բաժնում կայանալիք առերես հարցաքննությանը ներկայանալու մասին:

8. Պատսխանողը քննիչին բանավոր հայտնել է, որ դատախազին բողոք է ներկայացնելու որոշման դեմ և մինչև բողոքի հարցը չլուծվի, չի մասնակցի քննիչի աշխատասենյակում նախատեսված առերես հարցաքննությանը:

9. Քննիչի որոշման դեմ 09.06.2015թ. պատասխանողը բողոք է ներկայացրել դատախազություն, որի օրինակը 09.06.2015թ. ժամը 09:35-ին մուտքագրել է նաև քննչական բաժնի գրասենյակ:

10. 11.06.2015թ. մեղադրյալների միջև առերես հարցաքննությունն իրականացվել է քրեակատարողական հիմնարկում, որին մասնակցել է պատասխանողը:

11. Դատախազություն ներկայացված բողոքը թողնվել է առանց քննարկման, հաշվի առնելով այն հանգամանքը, որ պատասխանողի կողմից ներկայացված միջնորդության պահանջը փաստացի կատարվել է:

Շարադրված փաստերը հիմնավորվել են հետևյալ ապացույցներով.

1. Դիմողի՝ ՀՀ փատաբանների պալատի նախագահին ուղղված 12.06.2015թ. գրությամբ:
2. Պատասխանողի՝ 07.07.2015թ. բացատրությամբ:
3. ՀՀ ՔԿ Աջափնյակ և Դավիթաշեն վարչական շրջանների քննչական բաժնի պետին հասցեագրված 08.06.2015թ. միջնորդությամբ:

4. ՀՀ գլխավոր դատախազին հասցեագրված 09.06.2015թ. բողոքով:

5. Երևան քաղաքի Աջափնյակ և Դավիթաշեն վարչական շրջանների դատախազության ավագ դատախազ Խ.Երեմյանի 15.06.2015թ. գրությամբ:

6. <u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.</u>

Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից տրամադրված 09.11.2015թ. տեղեկանքի համաձայն փաստաբան Արմեն Հայրապետյանի (արտոնագիր թիվ 1787, ստացված 14.06.2014թ.) նկատմամբ 2014-2015թթ. ժամանակահատվածում այլ կարգապահական վարույթ չի հարուցվել:

7. <u>Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>

Պալատի խորհուրդը գտնում է, որ փաստաբան Արմեն Հայրապետյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը ենթակա է կարճման հետևյալ պատճառաբանությամբ.

Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 6.1.1 կետի համաձայն. *«Վստահորդի շահերը մինչդատական վարույթում ներկայացնելու ընթացքում փաստաբանի գործողությունները պետք է համապատասխանեն քրեական դատավարության օրենսգրքի և Օրենքի պահանջներին»*:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 205-րդ հոդվածի 5-րդ և 212-րդ հոդվածի 3-րդ մասերի համաձայն՝ «Արգելամքի տակ գտնվող կասկածյալը կամ մեղադրյալը կանչվում են արգելանքի տակ պահելու վայրի վարչակազմի միջոցով», «Մեղադրյալը հարցաքննվում է նախաքննության կատարման վայրում, իսկ անհրաժեշտության դեպքում՝ իր գտնվելու վայրում»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 73 հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ «Պաշտպանը պարտավոր է՝ ... մեղադրյալին իրավաբանական օգնություն ցույց տալու համար ներկայանալ քրեական վարույթն իրականացնող մարմնի կանչով», «ենթարկվել դատախազի, քննիչի, հետաքննության մարմնի, դատական նիստը նախագահողի օրինական կարգադրություններին»:

«Փաստաբանության մասին>> ՀՀ օրենքի 5-րդ հոդ. 1-ին մասի համաձայն՝ փաստաբանական գործունեությունն իրականացվում է <<օրենքով չարգելված բոլոր միջոցներով և եղանակներով»:

Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 3.5.3 կետի համաձայն. «Փաստաբանը պարտավոր է չկատարել վստահորդի շահերին հակասող որևէ գործողություն...»:

Վկայակոչված նորմերի վերլուծությունը ցույց է տալիս, որ մեղադրյալի հարցաքննությունը կարող է իրականացվել ինչպես նախաքննության կատարման վայրում, այնպես էլ մեղադրյալի գտնվելու վայրում: Միաժամանակ մեղադրյալի պաշտպանը պարտավոր է ներկայանալ վարույթն իրականացնող մարմնի կանչով:

Տվյալ գործի պարագայում հիմնավորված է, ոչ 08.06.2015թ. փաստաբան Արմեն Հայրապետյանը գրավոր կարգով ծանուցված է եղել 09.06.2015թ. ժամը

15.00-ին նշանակված առերես հարցաքննությանը ներկայանալու համար և նշանակված օրն ու ժամին չի ներկայացել:

Պարզելու համար, թե արդյոք փաստաբան Արմեն Հայրապետյանի արարքում առկա է վարքագծի կանոնագրքի մատնանշված նորմի խախտում, թե ոչ, Պալատի Խորհուրդը հարկ է համարում անդրադառնալ հետևյալ հարցերին.

1. Որին է եղել փաստաբանի կողմից հիշյալ քննչական գործողության կատարման վայր չներկայանալու դրդապատճառն ու նպատակը,
2. Ինչ հետևանքներ կարող էին վրա հասնել, եթե փաստաբանը ներկայանար վարույթն իրականացնող մարմնի կանչով և մասնակցեր գործողությանը:

Պալատի խորհուրդը գտնում է, որ փաստաբան Արմեն Հայրապետյանը որևէ նպատակ չի ունեցել նախատեսված քննչական գործողության կատարմանը խոչընդոտել կամ ձգձգել դրա իրականացումը, ինչի ապացույցն է այն հանգամանքը, որ նախատեսվածից մեկ օր անց այդ գործողությունն իրականացվել է քրեակատարողական հիմնարկում և դրան մասնակից է եղել փաստաբանը:

Պալատի խորհուրդը գտնում է, որ փաստաբան Արմեն Հայրապետյանն իրոք համոզմունք է ունեցել, որ առերես հարցաքննությունը վարույթն իրականացնող մարմնի գտնվելու վայրում իրականացնելը կարող էր ազդեցություն ունենալ դրա օբյեկտիվության, արդյունքում ձեռք բերվելիք ապացույցի որակի վրա: Իր այդ մտավախությունները փաստաբանը մանրամասն շարադրել է վարույթն իրականացնող մարմնին հասցեագրված միջնորդությունում, ապա նաև դատախազին ուղղված բողոքում:

Միաժամանակ Պալատի խորհուրդը առկա գործի պայմաններում, հաշվի առնելով վարույթում առկա ապացույցների ծավալը, զերծ է մնում փաստաբանի ունեցած մտավախությունների իրական կամ ոչ իրական լինելու մասին գնահատականներ տալուց: Այս առումով Պալատի խորհուրդը հնարավոր չի համարում նաև վարույթն իրականացնող մարմնի կողմից, փաստաբանի դիրքորոշմանը ծանոթ լինելու պարագայում, քննչական գործողությունն անպայման նախաքննության իրականացման վայրում անցկացնելու դիրքորոշման օրինականության հարցին անդրադառնալը:

Այնուամենայնիվ փաստ է, որ փաստաբանի կողմից ներկայացված միջնորդության պահանջի հետ ըստ էության համաձայնվել է թե վարույթն իրականացնող մարմինը, թե նախաքննության նկատմամբ հսկողություն իրականացնող դատախազությունը, ինչի ապացույցն է առերես հարցաքննությունը քրեակատարողական հիմնքրկում իրականացնելը և դա հաշվի առնելով փաստաբանի բողոքն առանց քննության թողնելը:

Պալատի խորհուրդը հաշվի է առնում նաև այն հանգամանքը, որ առերես հարցաքննությունը նշանակված է եղել 09.06.2015թ. ժամը 15.00-ին, նույն ժամանակահատվածում քննարկման ընթացքում է եղել փաստաբանի՝ քննչական գործողությունը քրեակատարողական հիմնարկում անցկացնելու միջնորդությունը մերժելու որոշման դեմ ներկայացված բողոքը: Ակնհայտ է, որ առերես հարցաքննության իրականացումը քննիչի աշխատասենյակում ինքնանպատակ ու անիմաստ կդարձներ փաստաբանի կողմից ներկայացված բողոքը, քանի որ դատախազը քննչական գործողության իրականացման վայրի վերաբերյալ «վեճը»

ստիպված կլիներ լուծել, երբ այդ գործողությունն արդեն իսկ կատարված կլիներ: Նման պայմաններում, փաստաբան Արմեն Հայրապետյանը, մտավախություններ ունենալով կատարվելիք քննչական գործողության վայրի վերաբերյալ, օրենքով սահմանված կարգով փորձել է ձեռնարկել միջոցներ այդ գործողությունն իր պատկերացմամբ դրա կատարման առավել արդյունավետ վայրում իրականացման համար (ինչն ի վերջո փաստաբանին հաջողվել է), մինչդեռ հակառակ պարագայում, նման համոզմունքներ ունենալով, առանց դատախազի կողմից կայացվելիք որոշմանը սպասելու այդ գործողությանը մասնակցելով փաստաբանն առերևույթ կարող էր խախտել Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 3.5.3 կետի պահանջը:

Վերը շարադրված բոլոր հանգամանքները ընդհանրացնելով Պալատի խորհուրդը գտնում է, որ փաստաբան Արմեն Հայրապետյանը Փաստաբանի վարքագծի կանոնագրքի խախտում թույլ չի տվել:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7. հոդվածի 5-րդ մասի, 39.9. հոդվածի, «Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կանոնադրության» 16.26-րդ կետի, «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման» կարգի 30-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջներով Խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Փաստաբան Արմեն Հայրապետյանի (արտոնագիր թիվ 1787) նկատմամբ «Փաստաբանի վարքագծի կանոնագրքի» 6.1.1 կետի պահանջների խախտման հատկանիշներով հարուցված կարգապահական վարույթը կարճել:

2. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել փաստաբան Արմեն Հայրապետյանին և դիմողին:

<u>Ծանոթություն.</u> *Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:*

ՀՀ փաստաբանների պալատի
խորհրդի նիստը նախագահող՝ **Երվանդ Վարոսյան**